ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Գոռ Պարգևի Գրիգորյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության ստուգումների իրականացման ոլորտի վերահսկողության վարչությունում (այսուհետ՝ Վարչություն) որպես փորձագետ աշխատելու ժամանակահատվածում (ս/թ 29.03-29.09) իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Անմիջական ղեկավարիս հանձնարարությամբ պատրաստել եմ գրություններ և ուղարկել ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, քաղաքացիներին, և այլն,
2. իրականացրել եմ պետական վերահսկողության արդյունքներով արձանագրված խախտումների, խնդիրների, դրանց պատճառների, հանգամանքների ու հետևանքների վերլուծություն դրանց վերաբերյալ վարչության պետին ներկայացնելով առաջարկություններ, տեղեկանքներ և զեկույցներ,
3. հավաքագրել եմ տվյալներ պետական կառավարման համակարգի մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտներում ուսումնասիրություններ կամ ստուգումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ,
4. ստացված դիմումների, բողոքների, առաջարկությունների, առցանց ստացվող հարցումների, ինչպես նաև օրենքով չարգելված այլ եղանակների միջոցով հավաքագրվող տեղեկատվությունը ամփոփել և համադրել եմ վերլուծության առարկայի կամ վերլուծության ենթակա երևույթի փաստացի վիճակի հետ և արդյունքներն ու համապատասխան առաջարկությունները ներկայացնել եմ Վարչության պետին,
5. իրականացրել եմ ծառայության լիազորությունների անխափան և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ տվյալների շտեմարանների ստեղծման, տվյալների արդիականացման, ծառայությանը հասանելի այլ շտեմարանների առկա տեղեկությունների արտածում,
6. մասնակցում եմ ստուգումների իրականացման ոլորտի պետական կառավարման համակարգի մարմիններում և պետական հիմնարկներում ուսումնասիրություններին.
7. մասնակցում եմ Սահմանադրությամբ և օրենքներով ստեղծված, պետական կառավարման համակարգի մարմին չհանդիսացող մարմիններում պետական միջոցների կառավարման օրինականության նկատմամբ ուսումնասիրություններին,
8. վարչության պետին ներկայացրել եմ Վարչության առջև դրված նպատակների և գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվությունների նախագծեր:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ստուգումների իրականացման ոլորտի վերահսկողության վարչության փորձագետ՝ **Գրիգորյան Գոռ**

«02» հոկտեմբերի 2023